6899

328(47)
Z-94

1924

2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք

Հ. Ս. Խ. Հ

ՀՐԱՀԱՆԳ
ՄԵՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

№ 2001.

328(47)
Հ-94

ԵՐԵՎԱՆ
ՀՍՍՌ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924.

ВСЕНАРОДНАЯ
БИБЛИОТЕКА УКРАИНЫ
В ХАРЬКОВЕ

328(47)
Հ-94
ար
կաս 96.ան

655

(8452-53)
23288-60

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Խորհրդային Հանրապետությունների Միության բանվորներն ու գյուղացիներն անցյալ տարին անցկացրին առանց իրենց մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարության։ Սակայն միայնակ մնալով՝ նրա կտակած ճանապարհից չշեղվեցին նրանք, այլ հաստատամտությամբ ու անշեղ շարունակեցին նրա գործը։ Միացած լինելով Խորհուրդներում, այլևս ղեկավար ունենալով Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցությունը՝ նրանք յերկիրը միահամուռ ջանքերով հասցրին մի շարք նոր հաղթանակների ու նվաճումների քաղաքական ու տնտեսական ասպարեզներում և սրանով նոր քարեր դրին կառուցվող կոմունիստական հասարակության հիմքի մեջ։

Մեր պատգամավորների վրա պարտականություն ենք դնում յերկիրը հաստատամտությամբ ու անշեղ տանելու նույն ուղիով՝ հետևելով աշխատավորների միակ ճանաչված ղեկավարին—ՌԿԿ-յանը, վոր հավատարիմ պահապանն է ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉԻ ավանդների։

2. Խորհրդային իշխանության ներքին ամրության ու հզորության աճումը, կարմիր բանակի գիտակից լինելն ու ույժը, շարունակ արագացող տնտեսական բարգավաճումը, վորին հասել ենք առանց

արտաքին ոժանդակության, այն անելանելի փակուղին, որի մեջ գտնվում է Եվրոպայի տնտեսությունը, միջազգային պրոլետարիատի մղած կռիվը,—ահա այս բոլորը միասին՝ վճռական դեր են խաղում բուրժուական կառավարությունների կողմից Խորհրդային իշխանությունը ճանաչելու խնդրում։

3. Այս ասպարիզում ամենամեծ դերը խաղացել է Խորհրդային իշխանության միջազգային քաղաքականությունը։ Խորհրդային իշխանությունն անշեղ ձգտելով խաղաղության, չենթարկվելով իմպերիալիստական պրովոկացիաներին, ճարտարությամբ հարթելով իր հարաբերությունները բուրժուական թշնամի կառավարությունների հետ, կարողացավ այս տարվա ընթացքում յերկիրը հասցնել Քըրզոնի լպիրշ վերջնագրից արդի վիճակին։

Անգլիայի ու ՍԽՀՄ միջև վերջերումս կնքած ընդհանուր դաշնագիրը մի նոր ապացույց է, թե որքան աճել է Խորհրդային Հանրապետության հեղինակությունը և ամրացրել նրա միջազգային դրությունը։ Կատարյալ հավանություն տալով խորհրդային պատվիրակության հաստատակամությունը Խորհրդային Ռուսաստանի շահերն ու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները պաշտպանելու խնդրում՝ մեր պատվիրակներին հանձնարարում ենք այսուհետև էլ հաստատ մնալ իրենց դիրքերում։

Պարտքերը վոչնչացնելուն և հողն ու մասնավոր սեփականությունն ազգայնացնելուն վերաբերյալ մեր որենքների անխախտությունն ընդունելով հանդերձ, մեր պատվիրակները համաձայնության գալու համար ստիպված պիտի լինին փոխադարձ անխուսափելի զի-

ջումներ անելու անշուշտ այն պայմանով, որ այդ զիջումները Խորհրդային Միության աշխատավորների համար վորևե նոր ծանրաբեռնության աղբյուր չլինին։

Մեզ թշնամի բուրժուական պետությունների հետ լայն համաձայնություններ կնքելու ուղին վոտք դնելով՝ ՍԽՀՄ-յան աշխատավորները պետք է առանձնապես արթուն ու զգույշ լինեն։ Աշխատավորները պետք է մտքներումը պահեն, որ մեզ հետ պայմանագիր կնքող կապիտալիստներն ամեն ջանք պիտի գործադրեն, որքան կարելի յե, շատ բան պոկելու մեզանից։

ՍԽՀՄ-յան բանվորներն ու գյուղացիները որքան միաձույլ ու համերաշխ լինեն, որքան մենք վստահ զգանք ներսում, այնքան մեծ կը լինեն մեր տնտեսության աջողությունները, այնքան քիչ զիջումներ կը ստանան մեզանից կապիտալիստները։

4. Հաստատելով ու հավանություն տալով Խորհրդային իշխանության անշեղ խաղաղասիրական քաղաքականությանն ու ընդհանրական զինաթափության կամ գեթ սպառազինման մասնակի կրճատում գլուխ բերելու հավատ ջանքերին, հավանություն տալով Կարմիր բանակի կրճատումներին՝ մենք միաժամանակ պարտականություն ենք դնում մեր պատգամավորների վրա, որ ամեն ջանք թափեն մեր յերկրի պաշտպանվելու ընդունակությունը բարձրացնելու, Կարմիր բանակի սպառազինությունը կատարելագործելու և նրա նյութական վիճակն ըստ ամենայնի ուժեղացնելու ու բարելավելու։

5. Անցած տարվա ընթացքում էլ ավելի ամրա-

պնդվեց Խորհրդային Հանրապետությունների հողի վրա ապրող բոլոր ազգությունների և ժողովուրդների յեղբայրական միությունը։ Իշխող ազգերի բուրժուազիան ճնշում է մյուս, ավելի թույլ ժողովուրդների աշխատավորներին։ Արևելքի ստրկացրած յերկրներից ճնշված ժողովուրդների հառաչանքներն ու մոտալուտ ապստամբության աճող վորոտն է լսվում։ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ գտնվող բոլոր ժողովուրդների ու ազգերի աշխատավորներն են միայն, վոր սերտ միացած, յեղբայրաբար իրար ոգնելով՝ աշխատում են իրենց աշխատավորական պետությանը կառուցման վրա։

Հավանություն տալով Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությանը՝ մենք պարտավորեցնում ենք մեր պատգամավորներին ըստ ամենայնի ոժանդակել ու շարունակել այս քաղաքականությունը։

6. Խորհրդային իշխանության ամրապնդման ու նրա հետագա զարգացման հիմնական պայմանը բանվոր դասակարգի ու գյուղացիության շաղկապի, միության ամրապնդումն ու զարգացումն է։ Մեր հանգուցյալ առաջնորդ ընկ. Լենինն է այս խնդիրը կըտակել մեզ։ Այս միությունը տարեցտարի ամրապնդվում ու ընդլայնվում է։ Մեր պատգամավորների վրա պարտականություն ենք դնում խորհուրդներում իրենց բոլոր ույժերը գործադրել, վոր բանվորի ու գյուղացու այս յեղբայրական միությունն ել ավելի զարգանա ու ամրապնդվի։

7. Միաժամանակ մեր պատգամավորներին պարտավորեցնում ենք՝ աչալուրջ հսկելու, վոր «ՆԵՊ»-ի տարերում լույս ընկած քաղաքային ու գյուղական բուրժուազիան, այլով նախկին հարստահարող տարրերը ու նրանց արբանյակները չկարողանան ներս սողոսկել մեր խորհրդային որգաններին մեջ ու վերջիններս վորևե ձևով ոգտագործել ի վնաս աշխատավորների շահերի։ Մեր պատգամավորների վրա պարտականություն ենք դնում կռվելու մեր դասակարգային թշնամիների ամեն տեսակի վնասակար վոտնձգությունների դեմ, ինչ վարագուրված ձևով ել վոր արտահայտվելու լինեն նրանք։

8. Անցած տարվա ընթացքում ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքն աճել է և նրա թափն արագացել։ Այս աճման ամենապայծառ ցուցանիշը դրամական ռեֆորմն է։ Մեր տնտեսության հետագա ամբողջ վերականգնումն ու մեր յերկրի զարգացումը կախված է դրամական ռեֆորմի հաջողությունից։ Լիովին հավանություն տալով Խորհրդային իշխանության ֆինանսական քաղաքականությանը, պարտք ենք դնում մեր պատգամավորների վրա ըստ ամենայնի ոժանդակել Խորհրդային իշխանության ձեռնարկած բոլոր քայլերին, վորոնց նպատակն է ապահովել պետական անդեֆիցիտ բյուջեն, և դրանով ել դրամական ռեֆորմն ամրապնդել՝ կանգ չառնելով առանձին ժամանակավոր վտանգությունների առաջ։

9. Անցած տարի գործարանային ու հայթայթող արդյունաբերության ասպարիզում խոշոր հաջողություններ ենք ունեցել։ Գոյություն ունեցող ձեռնարկությունների մեջ արտադրության տեխնիկան բարելավել ենք, ինքը, արտադրությունը մեծ չափով

ընդարձակել ենք, Ցերվանում բաց ենք արել բամբակ զտող գործարան, Սարդարաբատում կառուցում ենք յեկրորդ գործարանի շենքը, Լենինականում կառուցում ենք մանածագործարանի շենքը և սկսել ենք մշակել Զանգեզուրի հանքերը։

Ամեն բանվորի ու գյուղացու պարտականությունն է ամեն կերպ նպաստել մեր արդյունաբերության աճմանը։ Այս է գործազրկությունը վոչնչացնելու դրավականը, յերկրի նյութական ու հոգեվոր կուլտուրան բարձրացնելու յերաշխիքը։

10. Բանվորների, ծառայողների ու աշխատավորների նյութական վիճակն զգալի չափով բարելավված է, թեպետ շատ դեպքերում դեռ շարունակում է մնալ ծանր։ Աշխատավորների նյութական կացության հետագա բարելավումն այսուհետև կախված պետք է լինի աշխատանքի արտադրողականության հետագա աճումից, արդյունաբերության զարգացումից և գյուղատնտեսական արդյունքների ու քաղաքային ապրանքների գների տարբերության նվազումից։

11. Արդյունաբերության ու ամբողջ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման հիմնական պայմանը գյուղատնտեսության ու քաղաքային արդյունաբերության մերձեցումը, զոդումն է։ Այս խնդիրը պահանջում է ամենամեծ չափերով ուշադրություն դարձնել ու աշխատել, վորպեսզի գործարանների աշխատանքի արտադրողականությունը բարձրանա, գործը ռացիոնալ հիմքերի վրա դրվի, կռիվ մղվի վերադիր ծախսերի դեմ, ինքնարժեքն առավելագույն չափերով եժանանա, ապրանքների վորակը լավանա և ուժեղանա այն ապրանքների արտադրությունը, վոր

բանվորներն ու գյուղացիներն ամենից ավելի յեն պահանջում։

Մեր պատգամավորների վրա պարտականություն ենք դնում, համառ ու անշեղ աշխատել այս խնդիրներն իրագործելու համար։

12. Բանվոր դասակարգի ու գյուղացիության աղկապի համար ամենամեծ նշանակություն ունի երկրում առևտրական գործը կազմակերպելը։ Գյուղացուն ամենից եժան, արագ ու նրա համար հարմար յեղանակով քաղաքային ապրանքներ մատակարարելու, ինչպես և քաղաքի պրոլետարներին գյուղական մթերքներ մատակարարելու խնդիրն ամենակարեվոր խնդիրն է, վորի լուծումից են կախված բանվոր դասակարգի ու գյուղացիության հարաբերությունները։ Հավանություն տալով Խորհրդային իշխանության կողմից պետական առևտրի ու կոոպերացիայի բոլոր տեսակների զարգացման գործում ձեռնարկվելիք քայլերին, մասնավորապես հավանություն տալով Ներքին Առևտրի ժողովրդական կոմիսարիատի կազմակերպմանը, պարտավորեցնում ենք մեր պատգամավորներին անշեղ շարունակելու այդ քաղաքականությունը։

13. Անցած տարվա ընթացքում Խորհրդային իշխանությունը շատ բան է արել գյուղատնտեսությունը բարձրացնելու ասպարիզում։ Բնահարկը փոխարինել է դրամահարկով, չքավորներին ու թույլ տնտեսություններին արտոնություններ է տվել, Գյուղատնտեսական բանկ է հիմնել, աշխատել է գյուղատնտեսական վարկը զարգացնել, նպաստել է գյուղատնտեսական կոոպերացիային, խոշոր ջանքեր է թափել յերկրի վոռոգման ու բամբակաբուծություն զար-

գացման համար, չորացրել ե ճահիճներ, ձեռնարկել ե մի շարք հողա-պրոպագանդային միջոցների,—և այս բոլորը մեծ չափով նպաստել ե գյուղատնտեսությունը վերակազմելուն։ Լիովին հավանություն տալով այս բոլոր ձեռնարկումներին, պարտականություն ենք դնում մեր պատգամավորների վրա՝ ըստ ամենայնի ոժանդակելու ձեռնարկած միջոցների ընդարձակմանն ու խորացմանը։

14. Մեր պատգամավորների վրա պարտականություն ենք դնում հատուկ ուշադրություն դարձնել այն ռայոնների բնակչության ու գյուղատնտեսության վրա, որոնք քայքայվել են բուրժուական կառավարությունների որոք և մինչև այժմ ել կարիք են զգում խոշոր ոժանդակության՝ լծկանով, գործիքներով, սերմացուով։ Մեր պատգամավորների վրա պարտականություն ենք դնում ամեն միջոցի ձեռնարկել՝ անասունների պահպանության, այլեվ մասսայական ստրկական գործարքների հնարավորությունը կանխելու համար։

Միաժամանակ անհրաժեշտ ե անմիջապես անցնել մոտակա տարիների աշխատանքների համար ծրագիր կազմելուն ու իրագործելուն հետեվյալ ասպարեզներում.

Անասնաբուժական գործի կազմակերպման, վոռոգման և յերաշտի ու ցած բերքատվության դեմ կռվելու, այլեվ գյուղատնտեսական վնասատուներին վոչնչացնելու համար ձեռնարկվելիք հողաշինարարական ու գյուղատնտեսական միջոցների։

15. Հավանություն տալով Խորհրդային իշխանության անցյալ ամբողջ շրջանի քաղաքականու-

թյանն ու գործունեությանը՝ պարտավորություն ենք դնում մեր պատգամավորների վրա անշեղ շարունակելու և ոժանդակություն ցույց տալու այդ քաղաքականությանը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԾՐԱԳԻՐ ԲԱՂԱԲԻ ՀԱՄԱՐ

Մասնավորապես առաջիկա տարվա նկատմամբ մեր պատգամավորների վրա պարտավորություն ենք դնում.

1. Միջոցներ ձեռք առնել բոլոր ձեռնարկություններին առավելագույն չափով գործ մատակարարելու, այլեվ աշխատանքը գիտական հիմունքներով կազմակերպելու և կարգուսարքը բարելավելու համար։

Միջոցներ ձեռք առնել վորպեսզի կանոնավոր կերպով արտադրական խորհրդակցություններ գումարվեն, միջոցների ու նյութեղենի մեծագույն խնայողություն լինի, վերադիր ծախսերը նվազեն, ավելորդ ներկայացուցչությունները վերացվեն, հաշվետվությունն ու կալկուլիացիան լավ հիմքերի վրա դրվի, ամեն կերպ ձգտելով ապրանքի վորակը լավացնելուն և նրա արժեքն իջեցնելուն։

Այսուհետև ել շարունակել արտասահմանից այնպիսի գործվածքների ու առարկաների ներմուծումը արգելելու քաղաքականությունը, վորոնք կարող են պատրաստվել ՍԽՀՄ գործարաններում։

Առավելագույն աջակցություն ցույց տալ արդյունաբերության այն ճյուղերին, վորոնք գործում են գյուղացիական շուկայի համար։

2. Ամեն կերպ ոժանդակություն ցույց տալ ՍԽՀՄ ու ընդհանրապես Խորհրդային իշխանության

կենտրոնական որգանների ձեռնարկած բոլոր միջոցներին, վորոնց նպատակն է մեծածախս առեվտրի ապպարիզից վտարել մասնավոր կապիտալը՝ զարգացնելով բանվորական ռայոններում պետորդանների ու կոոպերացիայի մանրածախս ու շրջավաճառ առեվտուրը, միաժամանակ ամենակատաղի կռիվ մղելով գները չարաշահորեն ուռցնելու դեմ։

Միջոցներ ձեռք առնել կոոպերացիայի մեջ քաշելու բոլոր բանվորներին ու բանվորուհիներին, հեշտացնելով փայավճարների ու անդամավճարների մուծումը։ Շարունակել և ուժեղացնել այն աշխատանքը, վորի նպատակն է կոոպերացիայի գործունեության վրա բանվորների վերահսկողություն կազմակերպելը, լծելով այս աշխատանքին թե բանվորներին և թե նրանց կանանց։

Առանձնապես հոգ տանել, վոր լավ ապրանքներ ընտրվեն և կոոպերատիվներն ուշադիր վերաբերվեն անդամների կարիքները բավարարելու գործին։

3. Ամեն կերպ ոգնել, վոր դրամական ռեֆորմի գործն ամրապնդվի։ Ամեն միջոց ձեռք առնել, վոր թե պետական ու թե տեղական ծախսեր կատարելու ժամանակ ամենամեծ խնայողություն արվի՝ անշեղ շարունակելով խորհրդային հիմնարկների ապպարատների ու շտատների կրճատումը, մինիմումի հասցնելով վարչական ծախսերը, նկատելով այդ խնայողությունը իբրև բուդջետների անմշտասարերության (безубыточность) համար կռվելու հիմնական միջոց։ Ամեն կերպ զարկ տալ տեղական բյուդջեյի գործին, ուժեղացնել արդյունաբերության վարկավորումը։ Թեթևացնել վարկի պայմանները։

Շարունակել այն աշխատանքները, վորոնց նպատակն է բոլոր պետական հիմնարկներում ամենախիստ ու ճշտագույն հաշվեվություն սահմանել։

4. Խորհրդի գործունեությունն ուղղելով բանվորների նյութական վիճակն ու կենցաղը բարելավելու կողմն՝ առանձին ուշադրություն դարձնել, վոր աշխատավարձը չիջնե, այլ կանգնե ամուր այն մակարդակի վրա, վորին հասել է, վոր աշխատավարձը բարձրացվի այն ձեռնարկություններում ու հիմնարկներում, վորտեղ նա դեռ չէ հասել արդյունաբերության մեջ յեղած միջին աշխատավարձի մակարդակին՝ ի նկատի ունենալով, վոր աշխատավարձի ավելանալը պետք է աշխատանքի արտադրողականության աճման, արդյունաբերության հասույթաբերության (доходность) շատանալու և վերադիր ծախսերի նվազման արդյունք լինի։

Խստիվ հետևել, վորպեսզի աշխատավարձի վճարումն ու արտոնագուստի հանձնումը կատարվի ժամանակին, սահմանված միջոցում։

Ուժեղացնել խորհրդային որգանների աշխատանքը բոլոր ձեռնարկությունների մեջ աշխատանքի պաշտպանության ապպարիզում։

Բարելավել ապահովագրական գանձարկղների աշխատանքը, վորպեսզի բանվորներն ապահովավճարներն (обезпечение) ու նպաստներն ստանան, ամենաքիչ ժամանակ վատնելով։

5. Հատուկ ուշադրություն դարձնել գործազրկության դեմ կռվելու վրա։ Ամեն միջոց ձեռք առնել, վոր աշխատանքի բորսաներում գործի կազմակերպությունը բարելավվի, և ամեն միջոց ու հնարավորու-

թյուն հայթայթել գործազուրկների ոգնության գործը կազմակերպելու համար։ Միջոցներ ձեռք առնել բանվոր յերիտասարդության կացությունը բարելավելու համար։

Պոռնկության դեմ կռվելու նպատակով հատուկ ուշադրություն դարձնել կանանց գործազրկության դեմ պայքարելու վրա, մասնավորապես աշխատելով, վոր կին բանվորուհիների վորակավորումը բարձրանա։

6. Միջոցներ ձեռք առնել, վոր բանվորներն ապահովվեն բնակարանով, բնակելի տարածությունն ուղիղ կերպով բաշխելով, կիսավեր ու կիսաշեն շինություններն ավարտելով և գոյություն ունեցող շենքերը վերանորոգելով ու համապատասխան հարմարություններ ստեղծելով։

Սկսել մոտագա տարիների համար նախանշված բնակարանային շինարարության (բանվորական շեներ, տուն—կոմունաներ) ծրագիր կազմել ու կյանքի մեջ իրագործել այդ ծրագիրը։ Ամեն կերպ աջակցություն ցույց տալ բնակարանային կոոպերատիվներին ու ընկերություններին, մանավանդ վարկով։ Հսկել, վոր բնակավարձ ու կոմունալ ծառայությունների վճար սահմանելիս դասակարգային քաղաքականությունը կիրառվի։

Միջոցներ ձեռք առնել, վոր բանվորական թաղերում, շեներում ու ծայրամասերում բարեկարգությունը զարգանա և սանիտարական հսկողությունն ուժեղանա։

7. Հաստատելով, վոր միասնական խորհրդային բժշկականության(медицина) կազմակերպությունն ու-

ղիղ հիմքերի վրա յե դրված, պետք է հոգալ վոչ միայն բժշկական ոգնության ճիշտ կազմակերպման, այլև ամենամեծ չափերով այն ընդարձակ միջոցների մասին, վորոնց նպատակն է աշխատավոր բնակչությունն առողջացնել և նրա մեջ տարածվող հիվանդությունները կանխել։

8. Յեռանդագին շարունակել անգրագիտության վերացման աշխատանքը։

Ամրապնդել գոյություն ունեցող մասսայական կուլտուր-կրթական հիմնարկները, մասնավորապես I աստիճանի դպրոցների և այն հաստատությունների ցանցը, վորոնք ծառայում են ստորին ու միջին արհեստագիտական կրթությանը, և միջոցներ ձեռք առնել, վոր նրանց նյութական վիճակը բարելավվի (ոժտել նրանց սարք ու կարգով, վառելիքով, դասական պիտույքներով և այլն)։ Աշխատավոր բնակչության համար ձրի ուսումն ապահովել։

Միջոցներ ձեռք առնել, վոր դպրոցները մոտ լինեն բանվորական ռայոններին։ Միջոցներ ձեռք առնել, վոր ուսուցչության նյութական կացությունը լավանա՝ ուշադրություն դարձնելով ռոճիկները ժամանակին վճարելու վրա։

Հատուկ ուշադրություն դարձնել արհեստագիտական-տեխնիքական կրթության վրա՝ վերջինիս ծավալմանը զարկ տալով ու ընդարձակելով այն ի հաշիվ հանրակրթական բնույթ ունեցող դպրոցների։

Հիմնել ու սարքի դնել բավարար չափով տեղական գրադարաններ, ընթերցարաններ, ակումբներ, հետևել, վոր սրանք բավարարվեն գրականությամբ, այլ և ուշադրություն դարձնել, վոր ռացիոնալ զվար-

ճությունները ու կուլտուրական հանգստի պայմանները, մասնավորապես կինոներ կազմակերպվեն։ Վճռական միջոցներ ձեռք առնել մանուկների անապատանության դեմ կռվելու և մանուկների սոցիալական ոգնության գործը բարելավելու համար։ Ընդարձակել մանկատների ու այլ հիմնարկների ցանցը։ Առանձին ուշադրություն դարձնել՝ ոժանդակելու պատկոմական շարժմանը։

9. Ամեն միջոց ձեռք առնել՝ կարգի բերելու ու բարելավելու աշխատանքը խորհրդային հիմնարկներում, մասնավորապես այնպիսիների մեջ, որոնց դիմելու ավելի շատ առիթ են ունենում աշխատավորները (գազ, բնակարանային բաժին, միլիցիա և այլն), որպեսզի ամենավճռական միջոցներով արմատախիլ արվի այնտեղից բյուրոկրատիզմը, ձգձգումները, թափթփվածությունը, այցելուների նկատմամբ ցույց տրվող կոպիտ ու անուշադիր վերաբերմունքը։ Ապահովապես հոգ տանել, որ ուշադրությամբ վերաբերվեն այլազգի այցելուներին, այլև, որ խորհրդային հիմնարկների աշխատակիցներն իմանան տեղական լեզուները։ Պետական լեզուն չիմացող քաղաքացիների համար հնարավոր դարձնել հիմնարկություններին իրենց մայրենի լեզվով դիմելն ու այս լեզվով պատասխան ստանալը։

Խրախուսելով բանվորա-գյուղացիական տեսչության գործունեությունը՝ պարտավորեցնում ենք մեր պատգամավորներին ամեն միջոցներով նպաստելու նրա գործունեության զարգացմանն ու ուժեղացմանը։

Ամեն միջոց ձեռք առնել հանցագործության, խուլիգանության ու գողերը չարաշահորեն բարձրացնելու դեմ մղվող կռիվը ուժեղացնելու համար՝ ուշադրություն դարձնելով միլիցիայի ու քրեական հետաքննության որգանների և հատկապես այն բանի վերա, որ սրանց անձնական կազմը լավագույն ու վերջինների աշխատանքն ըստ արժանվույն վարձատրվի։

Ուժեղացնել քննչական ու դատական որգանների աշխատանքը, որպեսզի հարուցվող գործերն առավելագույն արագությամբ նայվեն, հատկապես աշխատանքի դատարաններում։

10- Ամեն կերպ աջակցել, որ Կարմիր բանակի ռազմական պատրաստությունը բարելավվի և յերկրի պաշտպանունակությունն ավելանա, այլ և ամեն կերպ ոժանդակել Դոբրոխիմին ու ՈՆԲԸ։

Միջոցներ ձեռք առնել, որ կարմիր բանակայիններին, հրամկազմի, քաղկազմի ու ինվալիդների ընտանիքներն ամեն տեսակ արտոնություններով ու նյութական ոգնությամբ ապահովվեն։

Ի կատարումն այս հրահանգի բոլոր կետերի՝ մեր պատգամավորները պետք է կանոնավոր կերպով լիակատար հաշիվ տան իրենց աշխատանքի, այլև Խորհրդային իշխանության այն բոլոր որգանների գործունեության մասին, որոնց աշխատանքների մեջ իրենք մասնակցություն են ունեցել։

Յեթե պատգամավորները չկատարեն աշխատավորների կամքը կամ խուսափեն Խորհրդային իշխանության հանդեպ կանգնած խնդիրներն իրագործելուց, նրանք պետք է հետ կանչվեն իրենց պաշտոններից և ընտրության միջոցով փոխարինվեն նոր պատգամավորներով։

(8452-57) 23288-90

ՀԱՅ ՀԱՅՐԱԿԱՆ ՊՐՈՒՍԻԱ ՀՈՒՍԱՓԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային իշխանությունը, վոր հանել է յերկիրն իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմներից և սովի ու փլուզման կապանքներից, կը կարողանա լիովին վերականգնել յերկրի տնտեսական հզորությունը և վերջնական ու ջախջախիչ հարված հասցնել աշխատավորների բոլոր թշնամիներին։

ԿԵՑՑԵ՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը։

ԿԵՑՑԵ՝ բանվոր դասակարգի առաջապահն ու աշխատավոր գյուղացիության ղեկավարը-Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցությունը։

ԿԵՑՑԵ՝ համաշխարհային սոցիալական հեղափոխությունն ու նրա գլխավոր շտաբ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ։

ՀՐԱՀԱՆԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ ԳՑՈՒՂԻ ՀԱՄԱՐ

Մեր ներկայացուցիչների վրա, մասնավորապես առաջիկա տարվա համար, դնում ենք հետևյալ պարտականությունները.

1. Հետևել, վոր միասնական գյուղատնտեսական հարկը դանձելիս խստագույն որինականություն պահպանվի և հարկն ուղիղ բաշխվի՝ Խորհրդային իշխանության բոլոր դեկրետների ու կարգադրությունների ճիշտ հիման վրա։

Անշեղ ու կետ առ կետ կատարել որենքի հոդվածները, վորոնք վերաբերում են թույլ տնտեսությունները լիովին հարկից ազատելուն ու արտոնություններին, և թույլ չտալ հարկային գործակալների վոչ մի ինքնակամ արարք, վոչ մի ինքնակամ հաշվում։ Միաժամանակ խստագույն որինական պատասխանատվության կանչել նենգորեն խուսափող հարկատուներին։

2. Ամեն միջոց ձեռք առնել ոգնելու անբերրիությունից վնասված վայրերի բնակչությանը՝ զորակոչի յենթարկելով կոոպերացիայի, գյուղատնտեսական վարկի ույժերը և ամեն կերպ զարգացնելով բնակչության ինքնագործունեությունը։

Գործնական ճիշտ նախագիծ մշակել այն միջոցների մասին, վորոնցով պետք է կռվել ապագա յերաշների վտանգի դեմ։

Միջոցներ ձեռք առնել, վոր գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրանա, գյուղացիները գյուղատնտեսության ավելի զարգացած ձևերին անցնեն, և գյուղացիության մեջ ընդարձակ չափերով տարածվեն գյուղատնտեսական գիտելիքները, շատանա ագրոնոմիական հողամասերի ու փորձադաշտերի թիվն ու զարգանա կենդանաբուծությունը։

Կազմակերպել անտառային տնտեսությունն ուղիղ վարելու գործը, աշխատել, վոր այս տնտեսության հասույթաբերությունը շատանա, և միջոցներ ձեռք առնել, վոր ժամանակին անտառներ տնկվեն, լավացնելով անտառապահների անձնական կազմը։

Հողաշինարարական աշխատանքի պայմանները թեթևացնել այն իմաստով, վոր այս աշխատանքը թույլ տնտեսություն ունեցող բնակչությանը հանրամատչելի լինի, և հողաշինարարությունն իրագործել արագ թափով։

3. Վորպեսզի գյուղացիությունը դյուրություններ ստանա իր արդյունքները վաճառելու և արդյունաբերական անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու, այն

եվ նպաստավոր պայմաններով, այլեվ կուլակների ու չարաշահության դեմ կռվելու նպատակով ամեն կերպ աջակցություն ցույց տալ գյուղական կոոպերացիայի բոլոր տեսակներին։

Ամեն կերպ ոժանդակել վարկային կոոպերացիայի զարգացմանը, այլեվ միջոցներ ձեռք առնել, վոր գյուղացիությանը կահույք (инвентарь), մեքենաներ ժամակարարվեն ապառիկ ու ձեռնտու պայմաններով կոոպերացիայի, արտելների ու ընկերությունների միջոցով։

Ամեն միջոցով աջակցել, վոր գյուղացիությունը նախաձեռնություն հանդես բերի գյուղական տնտեսությունը կոլեկտիվիզացիայի յենթարկելու գործում, ոժանդակել, վոր յերկրագործական աշխատավորական միավորություններ ու կոլեկտիվներ կազմվեն հողը միատեղ մշակելու, այլ եվ կուլտուրական գյուղացիական տնտեսություն կազմակերպելու համար։ Նմանապես միջոցներ ձեռք առնել, վոր զանազան տեսակի ընկերություններ (վոռոգման, մեքենաների և այլն) կազմվեն ինչպես հողի վորակը լավացնելու, նույնպես և ձեռնտու պայմաններով գյուղատնտեսական կահույք գնելու համար՝ այս կազմակերպությունների մեջ մտցնելով ամենից աղքատ տնտեսությունները։

Աջակցություն ցույց տալ արհեստավորական (промысловый) կոոպերացիայի բոլոր տեսակներին, մասնավորապես արհեստավորական արտելներին, վորոնց մեջ կազմակերպված է գյուղական աղքատ դասը։

4. Ամեն միջոց ձեռք առնել, վոր աղքատ ու միջակ գյուղացիները համախմբվեն փոխադարձ ոգնության ընկերությունների գյուղացիական կոմիտեների շուրջը։ Ամեն կերպ աջակցել թույլ տնտեսությունները վերականգնող կոմիտեներին։

5. Խորհրդային բարձր որգանների միջոցով շրջունակել արդյունաբերության արդյունքները եժանացնելու աշխատանքը, վորպեսզի հնարավորություն տրվի գյուղացիությանը իրեն անհրաժեշտ ապրանքները ձեռք բերելու։

Ամեն միջոց ձեռք առնել զարգացնելու զանազան տեսակի կոոպերատիվ ու պետական առևտուրը, վոր վերջինս կարողանա վտարել ապրանքառուին (скупщик) ու չարաշահին։

Ամեն կերպ աջակցել գյուղատնտեսական բանկին, վոր հաջողությամբ աշխատե գյուղատնտեսական վարկի ասպարիզում և վարկ տա կոոպերատիվ ստորին ցանցին։

Ամեն կերպ ոժանդակել արդյունաբերության այն ճյուղերին, վորոնք գյուղացիության մասսայական սպառման առարկաներ են պատրաստում։

Միջոցներ ձեռք առնել, վոր ուղեշինարարությունը (дорожное строительство) զարգանա և հաղորդակցության ճանապարհներն ու միջոցները բարելավվեն։

6. Ամեն միջոց գործադրել գրամական ռեֆորմն ամրապնդելու, վորի համար ամենամեծ խնայողության ու տնտեսման ջանադիր լինել պետական ու տեղական ծախսեր անելիս։

Միջոցներ ձեռք առնել, վոր պետական ու տեղական գույքերի ու ձեռնարկությունների հաստատությունը ավելանա։

Բոլոր հարկերի լիակատար ու ժամանակին գանձումն ապահովել։

Բոլոր հիմնարկներում ճիշտ և մանրամասն հաշվեմատյան սահմանել։

Ամեն կերպ աջակցել տեղական բյուջեյի ամրապնդմանը։

7. Ցեռանդագին շարունակել անգրագիտությունը վերացնելու աշխատանքը։ ՍԽՀՄ այն վայրերում, որոնք բազմազան ազգային կազմ ունեն, պետք է հատուկ ուշադրություն դարձնել լուսավորության գործը կազմակերպելու վրա։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել անգրագիտությունը վերացնելու և քաղուսավորական աշխատանքի վրա այն ռայոններում, որտեղ Խորհրդային իշխանության հաստատվելուց առաջ ամենևին դպրոցներ չեն եղել։

Միջոցներ գործադրել, որ դպրոցների նյութական վիճակը բարվոքվի, վերանորոգումներ կատարվեն, կահ ու սարք ունենան, վառելիք, դասական պիտույքներ ու ամեն անհրաժեշտ պարագա ստանան նորմալ աշխատանք կատարելու համար։

Ձեռնարկել գյուղական յերիտասարդության դպրոցներ կազմակերպելուն, վերջիններս դարձնելով գյուղատնտեսական գիտելիքների կենտրոններ գյուղացիության միջավայրում։

Միջոցներ ձեռք առնել, որ կազմակերպվեն լիկ-կայաններ, դրադարաններ, իրճիթ-ընթերցարաններ, դասախոսություններ հասակավորների համար, մանավանդ առողջապահության, գյուղատնտեսության ու քաղաքական հարցերի մասին։

Լրագրերի ու վերոհիշյալ խնդիրներին վերաբերող հանրամատչելի գրքերի կանոնավոր ստացումն ապահովել։

8. Մեծագույն ուշադրություն դարձնել յերիտասարդության ֆիզիքական ու կուլտուրական կրթության, մասնավորապես վորբերի վիճակի վրա, լինի այդ վորբանոցներում, թե նրանցից դուրս։ Վորբերի միջից արժատախիլ անել վերջերս նկատվող հանցագործության ու այլ բացասական յերևույթների աճումը։

Անտուն գաղթականների ու աղքատների համար ապաստարաններ կազմակերպել։

9. Միջոցներ ձեռք առնել գյուղական վայրերում գոյություն ունեցող խոշոր բուժական հիմնարկների դրությունը բարվոքելու համար։

Անհրաժեշտ է գյուղական վայրերում բարելավել բժշկական կազմի նյութական կացությունը և գավառակային բժշկական ժամմինների կանոնավոր աշխատանքն ապահովել։

Հոգալ գյուղական ու գավառակային բուժական հիմնարկների ծննդաբերական ոգնությունը բարվոքելու մասին։

Պատերազմի ու աշխատանքի ինվալիդների բուժական ոգնությունը բարելավել՝ մասնավորապես հոգալով նրանց վերջնական ապաքինման մասին։

10. Ամեն միջոց ձեռք առնել կանոնավորելու աշխատանքը բոլոր խորհրդային հիմնարկներում, ինչպես տեղական, նույնպես և քաղաքային, առանձնապես նրանց, որտեղ դիմելու առիթ ամենից շատ են ունենում աշխատավորները (միլիցիա, հողային կոմի-

սիաներ, հարկային տայաններ, զազսի բաժին և այլն), վորպեսզի ամենավճռական միջոցներով այնտեղից արմատախիլ արվի բյուրոկրատիզմը, ձգձգումները, թափթփվածություն, այցելուների նկատմամբ կոպիտ ու անուշադիր վերաբերմունքը։ Վերջապես նկատվող այնպիսի դեպքերին, յերբ գյուղի զանազան որգաններ անուշադիր են վերաբերվում գեղջկուհու, իբրև տնտեսուհու կարիքներին, այլ և

Ուշադիր լինել, վոր աղահարդանի, հողաբաժանության ու այլ դատական գործերն ուղիղ ու արագ լուծումն ստանան։

Ամեն միջոց ձեռք առնել զարկ տալու հանցագործության ու խուլիգանության դեմ մղվող՝ կռվին՝ հատուկ ուշադրություն դարձնելով միլիցիայի որգանների, մանավանդ անձնական կազմի ու սրանց նյութական կացությունը բարվոքելու վրա։

Ուժեղացնել քննչական ու դատական որգանների աշխատանքը, վորպեսզի հարուցվող գործերն առավելագույն արագությամբ քննության առնվեն։

11. Ամեն միջոցներով աջակցել Կարմիր բանակի կենցաղը բարվոքելուն, զորանոցները սարք ու կարգով ոժտելուն, զորամասերին ու սրանց կադրային կազմին ընակարան արամադրելուն և սրանց համար վառելիք պատրաստելուն և հասցնելուն։

Միջոցներ ձեռք առնել, վոր Կարմիր բանակայիններին, հրամիազատի, քաղկազմի ու ինվալիդների ընտանիքներն ամեն տեսակ արտոնություններով ու նյութական ոգնությամբ ապահովվեն։

Միջոցներ ձեռք առնել կռվելու դասալքության ու դասալիքներին պարտակողների դեմ։

12. Միջոցներ ձեռք առնել, վոր գեղջկուհիների լայն խավերը աշխատանքի լծվեն գյուղխորհրդում, փոխոգնության կոմիտեներում, կոոպերացիայի մեջ՝ գիտակից ու պատրաստված կանանց առաջ քաշելով ու սրանց խորհրդի անդամ ու նախագահ, կոոպերատիվի, դպրոցական խորհրդի ու այլ խորհրդային որգանների անդամ ընտրելով։

Ի կատարումն այս հրահանգի բոլոր կետերի՝ մեր պատգամավորները պետք է կանոնավոր կերպով լիակատար հաշիվ տան իրենց աշխատանքի, այլև խորհրդային այն բոլոր որգանների գործունեության մասին, վորոնց աշխատանքներում նրանք մասնակցություն են ունեցել։

Յուրաքանչյուր պատգամավորները չկատարեն աշխատավորների կամքը կամ խուսափեն Խորհրդային իշխանության առաջ կանգնած խնդիրներն իրագործելուց, նրանք պետք է հետ կանչվեն իրենց պաշտոններից և ընտրությամբ փոխարինվեն նոր պատգամավորներով։

Խորհրդային իշխանությունը, վոր հանել է յերկիրն իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմներից և սովի ուսփլուզման կապանքներից, կարողանա լիովին վերականգնել յերկրի տնտեսական հզորությունը և վերջնական ու ջախջախիչ հարված հասցնել աշխատավորների բոլոր թշնամիներին։

Կեցցե՛ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը։

Կեցցե՛ բանվոր դասակարգի առաջապահն ու աշ-

խատավոր գյուղացիության դեկավարը—Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցությունը։

Կեցցե՛ համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունն ու նրա գլխավոր շտաբ Կոմունիստական Ինտերնացիոնալը։

ՀՐԱՀԱՆԳԻ ՀԱՎԵԼՎԱԾ ԱՅՆ ՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ, ՎՈՐՏԵՂ ԿԱՆ ԲԱՏՐԱԿՆԵՐ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐ

Ամեն կերպ աջակցություն ցույց տալ արհմիություններին, հատկապես Համհողանտառաշխին սրանց աշխատանքների ընթացքում, բատրակներին գյուղում հաշվառման յենթարկելիս, սրանց արհմիությունների շարքերը գրավելիս, այլև այն ժամանակ, երբ նրանք աշխատանքային ու կոլեկտիվ պայմանագրեր են կնքում բատրակ վարձողների հետ։

Խիստ հետևել, որ աշխատավարձի վճարումները կատարվեն ժամանակին, պայմանագրերի մեջ սահմանված ժամկետներում։

Ամրապնդել և ընդունել գյուղատնտեսական աշխատանքի տեսչության ցանցը։ Ամրապնդել բատրակների աշխատանքի պաշտպանության գործը գյուղում։ Գյուղի բատրակ խավերն ամեն կերպ քաջալերել խորհրդային աշխատանքի առաջարեղ, նրանց ամենահամապատասխան ներկայացուցիչներին առաջ քաշելով ու մտցնելով գյուղատնտեսական ու սպառողական կոոպերացիայի, փոխոգնության կոմիտեի, խորհուրդների ու այլ որդանների մեջ։

ՀԱՎԵԼՎԱԾ.—Յուրաքանչյուր տվյալ վայրում

հրահանգը պետք է հարմարեցնել տեղական պայմաններին՝ նրա մեջ մուծելով այնպիսի կետեր ու պահանջներ, վորոնք տվյալ ռայոնի բնակչության համար կենսական նշանակություն ունեն, և ընդհակառակը, հանելով այն կետերն ու պահանջները, վորոնք բնակչության համար լուրջ նշանակություն չունեն կամ նրան շատ հասկանալի չեն։

ВСЕНАРОДНЯ БІБЛІОТЕКА УКРАЇНИ В ОДЕСІ.

2013
<< Ազգային գրադարան >>
NL0040425
68869